ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 19/03/07

ք. Երևան

15 մարտի 2019թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Մ. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և

Անհատ ձեռնարկատեր Աբգար Խաչատրյանը, այսուհետ «Վաճառող», մյուս կողմից (այսուհետ՝ յուրաքանչյուրը առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է Գնորդի պատվերներով Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Գնորդի սեփականությանը հանձնել սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ապրանքները (այսուհետ նաև՝ Ապրանքներ), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքները և վճարել Ապրանքների համար:

1.2. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրել սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

1.3. Սույն Պայմանագրով Ապրանքների մատակարարումը իրականացվում է մինչև 2019թ. մարտի 30-ը ներառյալ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքները Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքներից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 (մեկ) օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրով նախատեսված բնութագրին չհամապատասխանող Ապրանքներ՝

ա) պահանջել հատուցելու Ապրանքների անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքներն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքները Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքներով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքների համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է Գնորդի պատվերով սահմանվածից պակաս քանակի Ապրանքներ, ապա՝

ա) պահանջել լրացնելու Ապրանքների պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքներից և դրանց համար վճարելուց, իսկ եթե Ապրանքների համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանքներ, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքները և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքների անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքներով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքների մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանքներ՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքներն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանքներ, որոնք չեն կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքների մատակարարման ժամկետները խախտվել են 1 (մեկ) օրից ավելի,

2.1.8 Զննել Ապրանքները և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքներից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքների պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքներն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքների քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքների բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները,

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված Ապրանքները:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքների համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդի կողմից բազմիցս խախտվել են Ապրանքների համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքները:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել Ապրանքները՝ Պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել Ապրանքների մատակարարումը Պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանքներ:

2.4.5 Գնորդին հանձնել Պայմանագրով նախատեսված որակի և քանակի Ապրանքներ՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքների որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքները կամ ողջամիտ ժամկետում տնօրինել դրանք, ինչպես նաև հատուցել Ապրանքները պատասխանատու պահպանության ընդունելու, դրանք իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Առկայության դեպքում Գնորդին հանձնել Ապրանքների պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին,

2.4.12. Մատակարարումը իրականացնել ՀՀ, ք Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 944 580 (ինը հարյուր քառասունչորս հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ բոլոր կիրառելի հարկերը: Սույն կետում նշված գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

3.2 Մատակարարված Ապրանքների արժեքը Գնորդը վճարում է Հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-ապրանքագրի երկկողմանի հաստատվելուց հետո 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքների դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքների որակի համապատասխանությունը կիրառելի ստանդարտների պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Ապրանքները ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքների մատակարարումից հետո 5 օրվա ընթացքում Վաճառողը Գնորդին է ներկայացնում իմ կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-ապրանքագիրը:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե Ապրանքները համապատասխանում են Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-ապրանքագիրը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի մեկ օրինակը կամ Ապրանքները չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե Պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում Ապրանքները կամ չի մերժում դրանց ընդունումը, ապա Ապրանքները համարվում են ընդունված և Պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշիվ-ապրանքագիրը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքների որակի և Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքների մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքների գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանքներ մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից Պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր ձևովհաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

8.5 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.6 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

8.7 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

10. Կողմերի տվյալները և ստորագրությունները

Գնորդ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Գործադիր տնօրեն՝
Մ. Գրիգորյան

Վաճառող
Ա/Ձ Աբգար Խաչատրյան

Հասցե՝ ՀՀ, գ. Ծակքար, փ. 1, տ. 10
ՀՎՀՀ՝ 72909444
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220199600416000

Ա. Խաչատրյան

Հավելված N 1
2019թ. մարտի 15-ին կնքված
N 19/03/07 պայմանագրի

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՐԺԵՔԸ

Հ/Հ	Անվանում	Տեխնիկական բնութագիր	Չափման միավորը	Քանակ	Միավորի արժեքը ՀՀ դրամ	Ընդհանուր գինը ՀՀ դրամ
1.	Դիմափոշի	Kryolan փոշի TL11, 60գ	Հատ	3	16000	48000
2.	Դիմափոշի	Kryolan փոշի TL7, 60գ	Հատ	6	16000	96000
3.	Դիմափոշի	Kryolan կոմպակտ NB	Հատ	2	20000	40000
4.	Դիմափոշի	Kryolan կոմպակտ NB5	Հատ	2	20000	40000
5.	Դիմափոշի	Kryolan կոմպակտ NB3	Հատ	2	20000	40000
6.	Դիմափոշի	Flormar	Հատ	14	4800	67200
7.	Կոնտուրինգի դիմափոշի	Pupa, բրոնզե, կլոր	Հատ	3	10500	31500
8.	Այտներկ	Bourjos N85	Հատ	4	5600	22400
9.	Շրթներկ	Տարբեր գույների, Golden Rose, Flormar	Հատ	15	1700	25500
10.	Տոնային քսուկ ստիկ	Kryolan NB	Հատ	4	15000	60000
11.	Տոնային քսուկ ստիկ	Kryolan NB3	Հատ	5	15500	77500
12.	Տոնային քսուկ ստիկ	Kryolan NB4	Հատ	3	15000	45000
13.	Տոնային քսուկ ստիկ	Kryolan Ivory	Հատ	2	14400	28800
14.	Տոնային քսուկ ստիկ	Kryolan NB7	Հատ	2	14400	28800
15.	Տոնային քսուկ ստիկ	Y	Հատ	2	14400	28800
16.	Տոնային քսուկ	Flormar	Հատ	6	4800	28800
17.	Դեմքը հարթող քսուկ	Maybelline	Հատ	18	5500	99000
18.	Շրթունքի մատիտ	Տարբեր գույների	Հատ	10	1300	13000
19.	Շրթունքի մատիտ	Trendy N02, N03	Հատ	12	690	8280

20.	Թարթչաներկ	Maybelline	Հատ	20	3100	62000
21.	Սպունգ դեմքի	Տուփով, տուփի մեջ 4 տարբեր գույների սպունգներ	Հատ	150	360	54000
Ընդհանուր						**944 580**

Գնորդ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Գործադիր տնօրեն՝
Մ. Գրիգորյան

Վաճառող
Ա/Ձ Աբգար Խաչատրյան

Հասցե՝ ՀՀ, գ. Ծակքար, փ. 1, տ. 10
ՀՎՀՀ՝ 72909444
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220199600416000

Ա. Խաչատրյան